ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն`     Վ .Արամյան

___2023թ.

ՀԱՅԱՇԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

# ԴԱՍՂԵԿԻ
# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
# ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուսումնական տարի

I դասարան

Կարինե Մնոյան

## Դասարանի ընդհանուր բնութագիրը՝

Առաջին «ա» դասարանը բաղկացած է 7 աշակերտից , որից 4-ը տղա են , 3-ը՝ աղջիկ:Դասարանի բոլոր աշակերտները առողջ են և ակտիվ:Սիրում են խաղալ , նկարել :Հագնվում են ճաշակով , մաքուր:Դպրոց ներկայանում են ժամանակին , գալիս են սիրով:Շատ են սիրում իրենց դասարանը և խոստացել են լավ սովորել:

## ՈՒսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում՝

Անհատական աշխատանքների միջոցով գտնել հետ մնացող երեխաներին: Հասնել նրան, որ բոլորն ազատ կարդան ու գրեն մայրենի լեզվով: Հաշվեն, գումարեն և հանեն ծրագրի շրջանակում եղածը: Կարողանան պատմել դասանյութի նկարի բովանդակությունը, կարողանան կարծիք հայտնեն՝ համաձայնվել կամ չհամաձայնվել որևէ երևույթ քննարկելիս, զարգացնել ազատ, անկաշկանդ մտածելակերպ:

## ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

### Հոգևոր դաստիարակություն՝

Սովորեցնել «Հայր մեր » աղոթքը: Կամաց-կամաց ծանոթացնել հայկական եկեղեցական ծեսերին:Հնարավորության սահմաններում այցելել տարածքում գտնվող սրբավայրերը:

### Գեղագիտական դաստիարակություն՝

Դասարանում ստեղծել գեղեցիկ ու ճաշակով կատարված աշխատանքների , նկարների , ձեռագրերի ցուցադրում:

### Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն՝

Աշակերտներին հաճախակի պատմել մեր քաջ նախնիների՝ թագավորների , զորավարների , հերոսների մասին:Սովորեցնել հայրենասիրական երգեր :

### Ֆիզիկական դաստիարակություն՝

Ֆիզկուլտուրայի դասերին ներկայանալ համազգեստով , կատարել առավոտյան վարժություններ: դասաժամերին ընդմիջել ֆիզկուլտ դադարով, հետևել աշակերտների նստելաձևին :

### Աշխատանքային դաստիարակություն՝

Հետևել դասարանի մաքրությանը , ջրել դասարանում աճեցվողծաղիկները , մաքուր պահել գրատախտակը , օդափոխել դասասենյակը:

## Բնապահպանական դաստիարակություն՝

Հաճախակի զրուցել բնությունը մաքուր պահելու, ծառեր տնկելու օգտակարության մասին:

## Դպրոց- ընտանիք կապը՝

Ապահովել ամուր կապ՝ ընտանիք-դպրոց , ուսուցիչ- ծնող:Հաճախակի հանդիպել ծնողների հետ և եթե կա անհրաժեշտություն օգնել ծնողին ճիշտ կազմակերպելու երեխայի ուսումը:

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների  բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| 1 | Գիտելիքի օր | Սպտեմբեր | |
| 2 | Դասարանի կոմպլեկտավորում | Սպտեմբեր | |
| 3 | Երեխաներին ապահովել դասագրքերով | Սպտեմբեր | |
| 4 | Ծանոթացնել օրվա ռեժիմին | Սպտեմբեր | |
| 5 | Ծանոթացնել ճանապարհային երթևեկության կանոններին | Հոկտեմբեր | |
| 6 | Նշել ուսուցչի օրը: | Հոկտեմբեր | |
| 7 | Դասղեկական ժամերին երեխաների մեջ խորացնել ընկերասիրությունը , հարգանքը միմյանց նկատմամբ: | Հոկտեմբեր | |
| 8 | Շաբաթօրյակների կազմակերպում | Նոյեմբեր | |
| 9 | Դասարանում բացել փոքրիկ ցուցահանդես: | Նոյեմբեր | |
| 10 | Հաճախակի վարել զրույցներ հիգիենայի կանոնների մասին: | Նոյեմբեր | |
| 11 | «Ոսկե աշուն» | Նոյեմբեր | |
| 12 | Ընթերցել հեքիաթներ , պատմվածքներ , ոտանավորներ: | Դեկտեմբեր | |
| 13 | Զրուցել դեկտեմբերի 7-ի երկրաշարժի մասին: | Դեկտեմբեր | |
| 14 | Էքսկուրսիայի կազմակերպում՝ մոտակա բլուրը: | Դեկտեմբեր | |
| 15 | Կազմակերպել Նոր տարվա հանդես | Դեկտեմբեր | |
| 16 | Դասարանը հարստացնել դիդակտիկ նյութերով: | Հունվար | |
| 17 | Նշել երեխաների ծննդյան տոները: | Հունվար | |
| 18 | Անցկացնել լավագույն ձեռագրերի մրցույթ: | Հունվար | |
| 19 | Զրույց «Մեր բանակը» թեմայով | Հունվար | |
| 20 | Հաճախակի պատմել մեր հերոսների մասին , հայրենասեր թագավորների մասին , զորավորների կյանքի ու | Փետրվար | |

| | | | |
|---|---|---|---|
| | գործունեության մասին: | | |
| 21 | Մրցույթ` լավագույն նկարների , լավագույն ձեռքի աժխատանքի , լավագույն քանդակի: | Փետրվար | |
| 22 | Էքսկուրսիա դպրոցի շրջակայքում «Ձմեռը մեզ մոտ» թեմայով: | Փետրվար | |
| 23 | Ծնողական ժողովների կազմակերպում | Փետրվար | |
| 24 | Կազմակերպել և անցկացնել ցերեկույթ նվիրված մայրիկների տոնին: | Մարտ | |
| 25 | Կերպարվեստի դասերի անցկացումը բնության գրկում , մոտակա այգում , բանջարանոցում: | Մարտ | |
| 26 | Նշել «Զատիկը» որպես եկեղեցական տոն | Ապրիլ | |
| 27 | Անցկացնել լրացուցիչ պարապմունք ` հետ մնացող աշակերտների հետ: | Ապրիլ | |
| 28 | Անցկացնել զրույցներ մեր ավանդական ճաշատեսակների , բարբառների , հագուստների և ծեսերի մասին: | Մայիս | |
| 29 | Այբբենարան հանդես | Մայիս | |